թայը ի Տուակիա... և անտի ի Գաղղիա... ապա ընթանայը ընդ Ակուիտանիա և ընդ Գուասկոնիա, իջանէր ի Սպանիա, երթայը ի Կալիցիա ի մեծահռչակն ուխտ Ս. Յակոբայ. այլ հռչակիւր և ինքն կենդանի սուրբ ուխտական. տարեալ լինէր առ թագաւորն (որ թուի Վերեմունտ Բ.), բժշկէր զդուստր նորա այսահար, և յամենայն ընծայից թագաւորին՝ առնոյր միայն արքանեակ մի Յովհան անուն, և կրթէր ի կրօնաւորական վարս։ Թողոյր զՍպանիա և խաղայր ի Բրիտանիա». ևն։

Ս. Սիմէոնի հետ թերեւս աւելորդ չըլլայ յիշել ժամանակակից ուրիշ հայ ուխտաւոր մը՝ Ս. Դաւիթ հայկազն (ծն. շուրջ 1000ին) որ Երուսաղէմի անօրինական Ս. Տեղերէն յետոյ կ'անցնի Հռոմ Ս. Պետրոսի և Պողոսի գերեզմաններուն վրայ կատարելու իր ուխտը. անկից կ'ուղղուի դէպ ի Սպանիա՝ Ս. Յակոբի գերեզմանը։ Աւգերեան տարակուսանքով կը նշանակէ որ թերեւս Ս. Դաւիթ գացած ըլլայ իր մտադրած տեղը. «Գնաց յԵրուսաղէմ, անտի ի Հռոմ, ապա դէմ եդեալ երթալ ի Սպանիա յուխտ Ս. Յակոբայ՝ զճանապարհայն (յերթալն, կամ ի դարձի) եկն զտեղի առ խոնջ մարմնով ի Լուքա»[1]։ Սակայն Պարոնիոս և Բոլլանդեանք վստահօրէն կ'ըսեն թէ Սպանիա չանցած կը մեռնի Լուքքայի մէջ (Իտալիա) 1050ին։

Ինչպէս կ'աւանդէ Ալիշան[2] 1200 էն վերջ Հայ–Սպանիական յարաբերութիւնները յաճախած են փոխադարձ մեր և իրենց Ս. Յակոբեանց Ուխտաւորներուն աղերսով և Ս. Յակոբոս Առաքեալի վարքին թարգմանութեամբ։

Հայերը ԺԳ դարէն կամ աւելի առաջ ալ Յովհաննէս անուն վարդապետ մը Սպանիա կը ղրկեն և թարգմանել կու տան Առաքեալին վարքը։ Սպանիացւոց կողմէն ալ ԺԶ դարուն Մուրցիայի Եպիսկոպոսը Բաքեքոյ – որ որդին է Սպանիոյ կարոլոս թագաւորի նուիրակին – Հայաստան ղրկած թարգմանել կու տայ Հայոց Յայսմաւուրքներէն կամ Տօնամակներէն՝ ինչ աւանդութիւն որ կար Առաքելոյն մասին։

Երկար է շարքը Հայ–Սպանիական յարաբերութեանց՝ մասնաւորապէս առեւտրական տեսակէտով[3]։ Իսկ մենք հոս հայ Ուխտաւորներու կարգին չենք կրնար մոռնալ մեր եղերաբախտ Կիլիկեան վերջին արքան՝ Լեւոն Ե. որ Գահիրէի մէջ եօթնամեայ (1375–1382) գերութենէն ազատելով շնորհիւ սրբազան Քահանայապետին և Գաստիլիոյ և Արակոնայի թագաւորներու միջամտութեան, նախ Երուսաղէմ գնաց իր ուխտը կատարելու. և ապա անցնելով ի Սպանիա 1383ին Գաստիլիոյ Յովհաննէս Ա. էն ստացաւ Մատրիտ քաղաքի տէրութիւնն և Վիլլա Բէալէ և Անտուխար քաղաքներն և այլ կալուածներ ու նուէրներ[4], ինչպէս որ կը վկայեն նոյն Յովհ. արքայի պարգեւագիր հրովարտակներն և Լեւոնի մուրհակները։ Այդ շրջանին է, 383ի ամառը՝ որ Լեւոն ուխտի կ'երթայ Քոմփոսթելա՝ Ս. Յակոբի գերեզմանին, և որ իր ազատութեան շնորհէն վերջ անշուշտ արցունքով կը հայցէ նաև ազատութիւնը Հայ ազգին՝ որ արդէն մատնուած էր և կը տառապէր անողորմ բռնաւորներու ձեռքը։

Լեւոնէ յետոյ և մեր Մարտիրոս եպս. Երզնկացիէն՝ ուխտաւորներու կարգին կը հանդիպինք համանուն ուրիշ Մարտիրոս եպիսկոպոսի մը որ Մարտին քաղաքին առաջնորդն է և իր ուխտը կատարած Սպանիոյ մէջ շուրջ 1541 թուականին։ Այս պատմական յիշատակը կը գտնենք վանքիս Հայկ. Ձեռագրաց ԺԳ[5] Աւետարանի մը

---

1. Հ. Մ. Աւգեր. Լիակ. Վարք Սրբոց, հտ. ԺԲ. էջ ...

2.–3. Տես Սիսականի «Սպանիա» հատուածը, էջ 457–459.

4. Տես Զամչեան. Պատմ. Հայոց հտ. Գ. գիրք Ե. էջ 363–364։ Լեւոն երբ քաղաքական խնդիրներու համար Բարիզ կը գտնուէր 1393ին, հոն հիւանդացաւ և վախճանեցաւ իր 60ամեայ հասակին (29 Նոյ.).

5. Ըստ Հ. Մ. Աւգերեանի ձեռագիր ցանկին (գր. 1791ին) ուր կայ ակնարկ այս յիշատակարանին (էջ 69–70). Իսկ Հ. Բ. Սարգիսեան իր «Մայր Ցուցակ»ին մէջ սոյն Աւետարանը կը թուագրէ ԺԴ. (Ա. հտ. էջ 441–2).